ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԸ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ» ԵՐԿԸ

Է դարի երկրորդ կէսի պատմիչ Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնոյ» երկն իր բնոյթով եւ շարադրանքի ոճով եզակի է վաղ միջնադարեան հայ մատենագրութեան մէջ: Օգտագործելով Տարօն գաւառում հաւաքուած գրաւոր եւ բանաւոր բազմաժանր նիւթերը՝ հեղինակը Հայաստանում առաջին անգամ ստեղծել է իր երկրամասի պատմութեան որոշակիօրէն համակարգուած շարադրանքը լայն պատմական ֆոնի վրայ:

Երկի վերջում զետեղուած բաւական ընդարձակ յիշատակարանում Յովհանը ներկայանում է որպէս Մամիկոնեան եպիսկոպոս, նշում, որ իր «շարադրութիւնը» կատարել է «ի վանսն Գլակայ, ի դուռն սրբոյ Կարապետին», որտեղ գաւառի առաջին եպիսկոպոս Զենոբ Ասորուց յետոյ եղել է քսանհինգերորդ (առկայ ձեռագրերում՝ ԼԵերորդ) առաջնորդը (ըստ այդմ՝ ենթադրելի է, որ Գլակավանքը եղել է Մամիկոնեան եպիսկոպոսութեան նստոցը): Յիշատակարանի՝ մեզ հասած գրչագրերի աւանդած մի արտայայտութեան համաձայն՝ աշխատութեան համակարգումը կատարուել է Հերակլ կայսեր (610-641 թթ.) եւ Ներսէս Տայեցի կաթողիկոսի (641-661 թթ.) օրօք, Խոսրով Բ Պարսից արքայի մահից յետոյ (628 թ.), «յիշխանութեանն Մամիկոնեան Վահանայ, զոր մայրենեաւք Կամսարական կոչեն»: Իրականում պարզ է, որ երկն ստեղծուել է մի քանի փուլով (նոյն կերպ, առնուազն երկու փուլով է գրուել նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի սոյն հատորում ներառուած 684 թ. Անանունի Պատմութիւնը) եւ վերջնականապէս ձեւաւորուել է դարի երկրորդ կէսում, բոլոր դէպքերում՝ մինչեւ Հայաստանի վերջնական ենթարկումը Արաբական խալիֆայութեանը, ամենայն հաւանականութեամբ՝ 680-ական թթ.: Ըստ երեւոյթին՝ պատահական չէ Հայոց ՃԼ թուականի (681 թ.) յիշատակութիւնը երկի Ժ գլխի աւարտական հատուածում եւ (ըստ Ն ենթախմբի ձեռագրերի) հեղինակի յիշատակարանի բնագրում, թէկուզ եւ վերջին հատուածում առկայ է նաեւ աւելի վաղ ժամանակաշրջանով (գուցէ՝ հետագայում աւելացուա՞ծ) թուագրումը:

Յովհանը նաեւ նշում է, որ իր «շարադրութիւնը» ամբողջացրել է տարբեր տեղերից հայթայթուած «ԼԸ պատճեան … ի մի գիրս հաւաքելով»: Իրականում հաւանաբար *պատճէններ* են կոչուել նրա ունեցած գրաւոր սկզբնաղբիւրներից մէկի կազմում հաւաքուած նիւթերը: Դա ըստ ամենայնի՝ Ե դարի վերջում կամ Զ դարի ամենասկզբում ստեղծուածի կամ խմբագրուածի տպաւորութիւն թողնող, Դ դարի սկզբի հոգեւորական Զենոբ Ասորի եպիսկոպոսին վերագրուած մի գործ էր, որում արդէն հաւաքուած էին Գլակավանքին ու Տարօն գաւառին վերաբերող պատմական եւ վանական բանահիւսութեանը հանգող, աղբիւրագիտական տեսակէտից յաճախ եզակի եւ անգնահատելի տեղեկութիւններ: Մէկ ուրիշ գրաւոր սկզբնաղբիւրում՝ Է դարի առաջին կէսում համախմբուածի տպաւորութիւն թողնող եւ ամենայն հաւանականութեամբ *Պարսից պատմութիւն* վերտառութիւնը կրած երկում հատուածները *գլուխներ* են կոչուել, եւ այդ անուանումը ներթափանցել է Յովհանի երկի երեք այլ հատուածների (Զ-Ը) գլխագրեր («Գլուխ Պարսից պատմութեան. գալոյն Միհրանայ…», «Գլուխ գալոյն Վախտանգայ…», «Գլուխ երրորդ պատճէնի. վասն գալոյն Տիգրանայ…»): Ինքը՝